ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՐՈՇՈՒՄ

23 մայիսի 2024 թվականի N ՑՊ-025-05/24

ք. Երևան

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԱԲԱՇԽՎԱԾ ԱՆՎԱՆԱԿԱՆ, ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ ՑՈՒՑԱԿԵԼՈՒ ԵՎ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ (Bbond) ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ նաև՝ Թողարկող) 2024 թվականի մայիսի 08-ի հայտը և մայիսի 15-ին ներկայացված հայտի լրացումը 849,100 Եվրո ընդհանուր անվանական ծավալով, 100 Եվրո անվանական արժեքով, 48 ամիս շրջանառության ժամկետով, 4.50% տարեկան արժեկտրոնային տոկոսադրույքով, 8,491 հատ լրացուցիչ տեղաբաշխված անվանական, արժեկտրոնային պարտատոմսերը ցուցակելու և պարտատոմսերի երկրորդային (Bbond) ցուցակում ընդգրկելու վերաբերյալ, ինչպես նաև «Հայաստանի ֆոնդային բորսա» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Օպերատոր) Ցուցակման հանձնաժողովի 2024 թվականի մայիսի 16-ի եզրակացությունը,

Հաշվի առնելով, որ ներկայացված պարտատոմսերը և Թողարկողը բավարարում են Օպերատորի «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոնների» (այսուհետև՝ Կանոններ) 12-րդ գլխով սահմանված պահանջներին, և ղեկավարվելով Օպերատորի Կանոնների 15-րդ գլխի 68 կետի 1-ին ենթակետով, և Օպերատորի կանոնադրության 9-րդ գլխի 9.57.-րդ կետի 9.57.5 ենթակետով, Գլխավոր տնօրենը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի 849,100 Եվրո ընդհանուր անվանական ծավալով, 100 Եվրո անվանական արժեքով, 48 ամիս շրջանառության ժամկետով, 4.50% տարեկան արժեկտրոնային տոկոսադրույքով, 8,491 հատ լրացուցիչ տեղաբաշխված անվանական, արժեկտրոնային պարտատոմսերը, որոնց «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ կողմից շնորհվել է AMSWISB2JER7 ծածկագիրը, իսկ Օպերատորի կողմից՝ SWISBJ հապավումը, ցուցակել և ընդգրկել պարտատոմսերի երկրորդային (Bbond) ցուցակում, ինչպես նաև թույլատրել դրանցով հասցեական առևտուրը և ռեպո գործարքների կնքումը:
2. Սահմանել, որ պարտատոմսերի երկրորդային (Bbond) ցուցակում ցուցակված են համարվում «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի AMSWISB2JER7 տարբերակիչ ծածկագիրը կրող 94,000 հատ և 9,400,000 Եվրո ընդհանուր անվանական ծավալով արժեկտրոնային պարտատոմսեր:
3. Հայտերի (առաջարկների) ներկայացումը և գործարքների վերջնահաշվարկը կատարել Եվրոյով:
4. Սույն որոշման ընդունման օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում որոշման մեկ օրինակն ուղարկել Թողարկողին:
5. Սույն որոշման ընդունման օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում որոշման մասին տեղեկություններ հրապարակել Օպերատորի առևտրային համակարգի և ինտերնետային կայքի միջոցով համապատասխան ստորաբաժանումների կողմից:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի մայիսի 29-ին:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ **ՀԱՅԿ ԵԳԱՆՅԱՆ**